

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է 75 րոպե

9-10-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Տրված բառակապակցություններից ո՞րը կարող է գործածվել «փոքրիկ» իմաստով:

- Ա. մի գլուխ Բ. մի մատ Գ. մի թարթիչ Դ. մի հոնք Ե. մի վիզ

2. Ի՞նչ է գրված Մ Մ  նկարելուկով:


- Ա. մերան Բ. մանկական Գ. մեն-մենակ Դ. միակ Ե. մի մուկ

3. Ամբողջացնել դարձվածքը. «Ձեռնոց դնող կատուն _____»:

- Ա. մուկ շատ կբռնի Բ. մուկ չի բռնի Գ. մկից կվախենա
Դ. մկից չի վախենա Ե. մկների մեջ չի ընկնի

4. Ո՞ր տարբերակի բառերը լրացնելով քառակուսու մեջ՝ տողերով և սյուներով կկարդանք բառեր:

- Ա. ունկ, ունք, կկու Բ. քուն, հոն, թեք Գ. կոն, կկու, արկ
Դ. կկու, ունք, կին Ե. սար, քար, վատ



5. Ո՞ր տարբերակում հրաման արտահայտող բառ չես գտնի:

- Ա. արդուկ Բ. տարբեր Գ. տարափ Դ. կանգառ Ե. առնետ

6. Հովհաննես Այվազովսկի, Հովհաննես Բաղդասյան, Հովհաննես Չանազանյան, Հովհաննես Թումանյան, Հովհաննես Չեփճյան, _____:

Գտնելով օրինաչափությունը՝ նշի՛ր, թե շարքում ով կլինի հաջորդը:

- Ա. Հովհաննես Իսակով Բ. Հովհաննես Քաջագունի Գ. Հովհաննես Հովհաննիսյան
Դ. Հովհաննես Շիրազ Ե. Հովհաննես Աբելյան

7. «Ուրիշի համար հոր փորոզը ինքը կընկնի մեջը» առածը նշանակում է.

- Ա. Ուրիշի համար հոր փորեա, քեզ համար հոր փորել կտվորես:
Բ. Ուրիշի հորում պահածը քոնը չէ:
Գ. Հոր փորես, արքայությունդ կհորես:
Դ. Ինքն իր նյութած դավադրության գոհը կդառնա:
Ե. Չարիքն ու բարիքը մի հորի մեջ չես լցնի:

8. Ի՞նչ բառ է գրված  նկարելուկով:

- Ա. անդանակ Բ. ակորդեոն Գ. կենդանի Դ. դեկան Ե. անկենդան

9. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում.



- Ա. Չյուն գա գլխիդ: Բ. Չայնը տաք տեղից գալ:
Գ. Չայնը կտրել: Դ. Չեռքերը ծալել նստել:
Ե. Չեռքերը փրփուրին գցել:

10. Տառերը գրված են ինչ-որ օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը պետք է դնել մեղվիկի փոխարեն:



մ, ե, է, չ, հ, վ, յ,

- Ա. ու Բ. ի Գ. տ Դ. ն Ե. մ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ի՞նչ բառ է գրված նկարելուկով:



- Ա. կենդանաբանական այգի Բ. կենդանի անկյուն Գ. կանադացու հետք
Դ. կենդանու հետք Ե. դատական հետախուզություն

12. Պատասխանի տարբերակներից չորսը «բարեկամներ» են, իսկ մեկը նրանց հյուր է եկել: Ո՞րն է հյուրը:

- Ա. բիլ Բ. բոսոր Գ. լաջվարդ Դ. ծավի Ե. քաջվարդ

13. Ո՞րն է հետևյալ ժողովրդական հանելուկի պատասխանը.

Ջրից է ելնում,
Ջրից վախենում:

- Ա. կրիան Բ. ավազը Գ. ջրիմուռը Դ. աղը Ե. գորտը

14. «Հոնքը շինելու տեղ աչքն էլ հանել» առածը նշանակում է՝

- Ա. վարսավիրի մոտ հոնքերը հարդարելիս աչքերը փակել
Բ. աչքով աչք չունենալ մեկի հետ, հոնքերը կիտել
Գ. փորձելով մի բան շտկել՝ ավելի մեծ վնաս հասցնել
Դ. ուտելիքը արջի նման պահել վաղվա համար
Ե. զարմանքից հոնքերը ճակատին թռչել

15. Ո՞ր բառից են քամվել *մղոն, ցավ, եղան, վեմ, ցող* բառերը:

- Ա. մեղրահաց Բ. մեղրածոր Գ. ցեղակրոն Դ. վարդացող Ե. մեղվանոց

16. *Թույր, բույր, հույս, խույս, լույս* բառերը պատրաստվում են էլույթ ունենալու մի աճպարարական ներկայացման մեջ՝ կատարելով նույնատիպ հնարք: Ցավոք, նրանցից մեկը չի կարողանում այդ հնարքը կատարել և չի մասնակցի ներկայացմանը: Ո՞ր բառն է դա:

- Ա. թույր Բ. բույր Գ. հույս Դ. խույս Ե. լույս

17. Նարեկը, Մանասը, Նուրիսը վոլեյբոլի թիմ էին ուզում կազմել: Նրանք, մի հետաքրքիր օրինակաչափություն հաշվի առնելով, ընտրեցին երեք թիմակիցներ: Ի՞նչ էին ընտրված թիմակիցների անունները:

- Ա. Տիգրան, Սիրան, Կարեն
Բ. Արմեն, Սանամ, Կարեն
Գ. Դավիթ, Նարե, Մինաս
Դ. Կարեն, Սանամ, Սիրուն
Ե. Նարեկ, Մահակ, Մաթեն

18. Ինը, տասը, ոչ մեկը, ինքը բառերին ո՞ր բառը չի հաջորդի:

- Ա. գիրքը
Բ. սառը
Գ. դառը
Դ. ամենքը
Ե. ընդամենը

19. Ո՞ր նախադասությունն է գերծ մնացել մակաբույծ բառերից:

- Ա. Շուշանը հնարավորինս չափով ջանք գործադրեց:
Բ. Այս շաբաթ զբաղված եմ, ուստի չենք հանդիպի:
Գ. Տանձենու ծառը ծաղկել է:
Դ. Երևանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը:
Ե. Ուսուցչուհին բազմիցս անգամ հիշեցրեց առաջադրանքի մասին:

20. Ո՞ր բառն է գաղտնագրված:

6^1 10^2 3^2 10^3 10^2 2^3

- Ա. վարորդ
Բ. երերուն
Գ. վարսեր
Դ. երեքնուկ
Ե. վարսակ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ո՞ր բացատրություններն են սխալ:

- 1. սակարկել - բանակցել ինչ-որ գործարքի ժամանակ
2. դագանակ - գավազան
3. քեռայր - քեռու տղա
4. քթոց - դնչկալ
5. սվին - սառը զենք

- Ա. 1, 3
Բ. 2, 3
Գ. 2, 4
Դ. 3, 4
Ե. 2, 5

22. Ի՞նչ է գրված նկարելուկով:



- Ա. Կարենը սուր ճոճեց:
Բ. Հանկարծ մի սուր ճիչ լսվեց:
Գ. Կինը հարևանին ինը հավ և վեց ճուտ տվեց:
Դ. Նարեկը ինձ թուր նվիրեց:
Ե. Կինը սուրճ տվեց:

23. Տառերի թվային արժեքներով գտեք, թե որ նախադասությունն է 401 8690 720 4001 թվերի միջոցով գաղտնագրված:

- Ա. Նա փող չի տա:
Բ. Մա քող չի բերի:
Գ. Նա քող չի տա:
Դ. Մա շատ փող ունի:
Ե. Նա փող կտա քեզ:

24. «Ներկը կերան քամիները, ընկեր Կարեն» նախադասության բառերի տեղերը չփոխելով՝ կարելի է նոր նախադասություն ստանալ այդ բառերի գրաշարմամբ (բառի բոլոր տառերով այլ բառ կազմելով): Ո՞րը կլինի նոր նախադասությունը:

- Ա. Ընկեր Նարեկ, մաքիները նկարը կերան:
Բ. Կարեն, քամիները տարան Նարեկի նկարը:

- Գ. Ընկեր Նարեկ, մաքիները ներկը կերան:
Դ. Նարեկը կրկին նկարեց իր ընկեր Կարենին:
Ե. Ընկերը Կարենին ծանոթացրեց Նարեկի հետ:

25. Մի հատվածս հոմանիշն է հերկ բառի, Մյուս մասս՝ տկարության հականիշ, Երրորդ մասով դու կարող ես հեշտությամբ ժխտել ցանկացած բան:

Ո՞ր գրողի կեղծանունն է ծածկագրված:

- Ա. Ա. Թևոսյան
Բ. Դ. Չպուզբյարյան
Գ. Մ. Հովհաննիսյան
Դ. Ե. Սողոմոնյան
Ե. Վ. Տեր-Գրիգորյան

26. Ի՞նչ կրկնվող ձայնավոր պետք է դնել ՉՉՆՆՆ տառերի արանքում, որ այն դառնա բառ:

- Ա. ա
Բ. ու
Գ. ի
Դ. ե
Ե. ը

27. Պ*տոր, խա*տեղ, բքա*եղդ, ծա*սել, թա*ծալի, գա*տնիք, ա*ճատել, թ*թակից, նո*կալի, պա*պաջուն, հե*հե*ուկ, քո*տիկ, ոսկրա*տ, ու*տապան, տա*տկալի, տա*տակամած, ջա*ջախել, ներգա*թ, շարժասանդու*ք, խրո*տ, երկնամու*, թ*վածք, գա*տնապահ, ընձու*տ, բա*տակից, ապ*տել, հա*ճապակի, ծա*կահյուս, ա*բանոց բառերը բաժանվել են երկու բանակի՝ ըստ *-ի տակ թաքնված տառի: Տարբերակներում բերված ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ա. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է երեքով:
Բ. Բանակներում բառերի թվերը հավասար են:
Գ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է մեկով:
Դ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է երկուսով:
Ե. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է չորսով:

28. Հրանտն ունի յոթ գնդիկ, որոնց վրա գրված է մեկական տառ՝ վ, ս, տ, ռ, կ, գ, ն: Անահիտն ունի խորանարդիկներ, որոնց բոլոր նիստերի վրա գրված է ա տառը: Նրանք, օգտագործելով բոլոր գնդիկները և մի քանի խորանարդիկ, կազմեցին հնարավոր ամենաերկար բառը: Քանի՞ տառանի է ստացված բառը:

- Ա. 10
Բ. 11
Գ. 12
Դ. 13
Ե. 14

29. Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը, տեղադրելով մեղվի փոխարեն, հնարավոր է կարդալ 8-տառանի մի բառ (տե՛ս նկարը): Բառը կարելի է կարդալ շարժվելով միայն վերնից ներքև և ձախից աջ ուղղություններով:

- Ա. Կ
Բ. Դ
Գ. Խ
Դ. Ծ
Ե. Ք

Table with 5 rows and 5 columns containing letters and symbols: Ա, Ն, Ա, Բ, Տ, Կ, Բ, Ն, Ա, Խ, Ե, Տ, Վ, Դ, Մ, Ի, Ս, Ո, Ե, Ի, Ա, Բ, Ք, Ը, Ս, Բ, Ա, Կ, ՈՒ, Ճ, Տ, Կ, Ճ, Ո, Բ, Մ

30. Ո՞րն է հետևյալ ժողովրդական հանելուկի պատասխանը.

Ինքը բարձր բարդի է, Շուք-շվաք չունի. Աշխարհի ծերը կհասնի, Հավի պոչին չի հասնի:

- Ա. ձայն
Բ. արձագանք
Գ. սոճի
Դ. աղվես
Ե. ճանապարհ